

Քաղաքացիական ծառայության կադրերի կարճաժամկետ և կադրերի երկարաժամկետ ռեզերվում գրանցված, ինչպես նաև կրկուսեր պաշտոնի հավաստագիր ունեցող անձանց ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդը (այսուհետ՝ խորհուրդ) տեղեկացնում է ժամանակավոր թափուր պաշտոնների վերաբերյալ

1. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի աշխատակազմի գիտական քաղաքականության վարչության գիտական արդյունքի առևտրայնացման և ինովացիոն ծրագրերի բաժնի գլխավոր մասնագետ (19/1-2.3-10)

Իրականացնում է կիրառական ուղղվածության գիտահետազոտական, գիտատեխնոլոգիական աշխատանքների արդյունավետության բարձրացմանն ուղղված ծրագրերի մշակման աշխատանքները: Իրականացնում է գիտական հետազոտությունների ու մշակումների արդյունքի առևտրայնացման ու տնտեսության մեջ կիրառական հետազոտությունների արդյունքների ներդրման մեխանիզմների մշակման աշխատանքները:

Նշված ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

-բարձրագույն կրթություն.

-<<Քաղաքացիական ծառայության մասին>>, <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքների և այլ իրավական ակտերի իմացություն.

-ռուսերենի կամ անգլերենի (ազատ) տիրապետում.

-համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Տվյալ ժամանակավոր թափուր պաշտոնի առաջացման հիմքի վերացման ժամկետն է՝ 05.11.2017/ հղիության, ծննդաբերության արձակուրդ/:

2. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի աշխատակազմի միջուկային անվտանգության վարչության համակարգերի և կոմպոնենտների բաժնի պետ-պետական տեսուչ (50-2.2-1)

Ապահովում է ատոմային էներգիայի օգտագործման բնագավառում միջուկային անվտանգության կարգավորման և հսկողության հետ կապված աշխատանքներ: Իրականացնում է միջուկային անվտանգության տեսակետից կարևոր աշխատանքների տեսչական ստուգումներ:

Նշված ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

- (1000) էներգետիկա և էներգամեքենաշինություն մասնագիտությունների գծով, կամ (0107) միջուկային ֆիզիկա մասնագիտությամբ բարձրագույն կրթություն և ԱԷԿ-ներում օպերատիվ ղեկավար պաշտոններում առնվազն հինգ տարվա աշխատանքային ստաժ.

- <<Խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի անվտանգ օգտագործման մասին>>, <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքների և այլ իրավական ակտերի իմացություն.

- կարգավորող մարմնի՝ միջուկային անվտանգության գծով պետական տեսուչի որակավորմանը ներկայացվող՝ Ատոմային էներգիայի Միջազգային Գործակալության ստանդարտների (ԱԷՄԳ-ի 50-SG-G1 և GS-G-1.1) պահանջների բավարարում.

- հուսալիության մասին դրական եզրակացություն, տրված լիազոր մարմնի կողմից.

- ռուսերենի (ազատ) և ԱԷՄԳ պաշտոնական հետևյալ լեզուներից որևէ մեկի՝ անգլերենի, ֆրանսերենի, իսպաներենի (կարդում և կարող է բացատրվել) տիրապետում.

- համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն, ինչպես նաև տարբեր տեղեկատվական շտեմարանների համակարգչային ծրագրերի շահագործման համար պահանջվող գիտելիքներ:

Տվյալ ժամանակավոր թափուր պաշտոնի առաջացման հիմքի վերացման ժամկետն է՝ մինչև քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնը մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի կողմից զբաղեցնելը:

3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի առաջատար մասնագետ (66-3.3-6)

Մասնակցում է մարզպետարանի գործունեության ոլորտին առնչվող հասարակական հետաքրքրություն ներկայացնող թեմաների վերաբերյալ Մարզպետի և այլ պաշտոնատար անձանց մամուլի ասուլիսների, հարցազրույցների, ճեպագրույցների, հայտարարությունների կազմակերպման ու անցկացման աշխատանքներին: Մասնակցում է օրվա մամուլի տեսության պատրաստման աշխատանքներին: Մասնակցում է պարտադիր հրապարակման ենթակա տեղեկությունների հրապարակմանը տարին առնվազն մեկ անգամ, իսկ դրանցում կատարված փոփոխությունների դեպքում 10-օրյա ժամկետում:

Նշված ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

- բարձրագույն կրթություն.

- <<Տեղեկատվության ազատության մասին>>, <<Զանգվածային լրատվության մասին>>, <<Լեզվի մասին>>, <<Հեռուստատեսության և ռադիոյի մասին>> ՀՀ օրենքների և այլ իրավական ակտերի իմացություն.

-համակարգչով (MS Windows, MS Word, Internet) և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Տվյալ ժամանակավոր թափուր պաշտոնի առաջացման հիմքի վերացման ժամկետն է՝ 30.11.2017 / երեխայի խնամքի արձակուրդ/:

4. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի առաջատար մասնագետ (66-3.3-7)

Մասնակցում է Մարզի զարգացման ծրագրի մշակման գործընթացին: Բաժնի պետի հանձնարարությամբ վերլուծում է Մարզի զարգացման հնարավորությունները, սահմանում է ներուլորտային գերակայությունները և նախանշում հնարավոր ֆինանսական աղբյուրները: Իրականացնում է զարգացման ծրագրերին ուղղված սեմինարների և քննարկումների նախապատրաստական աշխատանքներ:

Նշված ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

-տնտեսագիտություն (էկոնոմիկա) և կառավարում (մենեջմենթ) մասնագիտությունների գծով բարձրագույն կրթություն.

-<<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>>, <<Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին>> ՀՀ օրենքների և այլ իրավական ակտերի իմացություն.

-համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Տվյալ ժամանակավոր թափուր պաշտոնի առաջացման հիմքի վերացման ժամկետն է՝ մինչև քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնը մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի կողմից զբաղեցնելը:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 2017 թվականի հունիսի 29-ը՝ ժամը 15:00

Քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվում գրանցված անձինք լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող են դիմել Խորհրդի աշխատակազմ (ք.Երևան, Տերյան 89, հեռ. 011 52-24-61)

ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի աշխատակազմ